

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՈՀ ՀՈՂՔՈՂԿՈՍԱՏ  
ԶԻՄԲՈՒԹԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵՈՒՆ

---

## ԿԱՆՈՆԵՐ

ՏՈՀՄԱՅԻՆ ՈՒՂԴՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ  
ԶԻՄԲՈՒԹԱԿԱՆ ԿՈԼՏՆՏԵՍԱՅԻՆ  
ԱՊՐԱՆԵՔԱՅԻՆ ՖԵՐՄԱՆԵՐԻ  
ՄԱՏՎԱՇՆԵՐԻՆ ՍՏՈՒԳՄԱՆ  
(ՄԱՐԶԱՆՔԻ)  
ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒԹՅՈՒՆ

Տոհմային ուղղություն ունեցող ձիաբուծական կոլտնտեսային՝ ապրանքային ֆերմաների հիմնական ինդիքն և բարելավող արտադրողներ տաք:

Տոհմային ձիու ներքին հատկությունները (ինտերյերը) հայտաբերելու համար անհրաժեշտ և նրանց սառւզել մարզանքի միջոցով և այդպիսով ապահովել ԽՍՀՄ-ի ձիերի բարելավման համար նախատեսվող տոհմային ձիերի ավելի կանոնավոր ընտրությունը:

Մարզանքի համար ընտրում են միայն ամենալավ մատղաշները, վորոնք վոչ միայն ցեղային (արյունակցային) ծագում ունեն, այլև ոժտված են կանոնավոր եքստերյերով (արտաքին հատկություններով): և ազատ են իրենց տոհմային արժեքը գցող արատներից, ուստի և արատավոր և անպայմանագրական մատղաշներին աննպատակ մարզանքի չպետք և յենթարկել:

Մարզանքի համար պետք է ընտրել մեկուկես տարեկան հասակի մատղաշ հովտակներ ու զամբիկներ:

Նորմալ գաստիճարակության պայմաններում այդ հասակի ազնվացեղ մատղաշներն ունենում են հետեւյալ չափումները՝

Հովտակների Քամբիկների	
Բարձրությունը մադա-	
վում (հասակը) . . . . .	149 սմ . . . . . 147 սմ
Դաստակի պարագիծը (փաթը) . . . . .	18 » . . . . . 17,5 »
Կրծքի պարագիծը . .	159 » . . . . . 159 »

Միանգամայն հասկանալի յեւ վոր մարզանքի համար մատղաշների ընտրելիս այս չափումների վրա անշեղորեն հենվել չի կարելի և վորոշ շեղումներ չափի պակասության կողմը, ինարկե, կարելի յեւ թույլատրել այն գեղքերում, յերբ մարզանքի համար ընտրվող մտրուկն ունենում ե ցեղային և եքստերյերային ուրիշ արժեքավոր հատկություններ:

Աղնվացեղ ձիու մարզանքի վերջնական նպատակն ե կենդանու ամբողջ որգանիզմ այնպիսի վիճակի բերել վոր առանց նրան վասելու հնարավոր լինի նրա աշխատունակության առավելագույն արտահայտությունն ստանալ ստուգումների միջոցով։ Տոհմային ձիարտադրության մեջ գրանով ե վորոշվում լավագույն ձիերի ընտրության հատկանիշներից մեկը։

Մարզանքի ընդհանուր սիստեմի սահմաններում սոհնային ձիերի մարզանքն անհատական պիտի լինի և յուրաքանչյուր ձիու առանձնահատկություններին հարմարեցրած, ամենախիստ հաշվի առնելով նրա ֆիզիկական հատկանիշները։

## ՄԱՐԶԱԿԱՅԱՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Ձիարտուծական ֆերմաների տոհմային մատղաշների մարզանքը, վորպես կանոն, ձիարտուծական վարչության աջակցությամբ, պետք ե կազմակերպել հենց ֆերմայում, հրավիրելով այդ նպատակի համար մասնագետ-ձիամարդիչ կամ ձիավար, իսկ յեթե հնարավոր լինի, կոլտնտեսականների միջից ջոկելով այդ գործին հմուտ մի կոլտնտեսական-ձիարուծ։

Մարզակայանների հոմարձի ձիապանները ջոկվում

են մատղաշներին լավ խնամող կոլտնտեսական-ձիապաններից։

Մարզվող մատղաշների սպասարկման համար հետևյալ նորման ե սահմանվում։ 1 ձիամարզիչը (ձիավարը) 20 ձիու համար և 1 ձիապանը վոչ ավելի, քան 5—6 ձիու համար։

Այն գեղքում, յերբ մի ֆերմայում մարզական հասակի մատղաշները քիչ են, ձիարուծական վարչության միջոցով պետք ե պայմանավորվել ձիարուծական հարկան ֆերմաների հետ՝ աղատ շենքեր ունեցող մի խոշոր ֆերմայում ընդհանուր մարզակայան կազմակերպելու մասին։

Միջջունտեսային այդպիսի մարզակայանը կազմակերպվում ե պայմանադրական սկզբունքներով, բաշխելով մարզակայանի ծախքերը (ձիամարզիչի կամ ձիավարի աշխատավարձը, մարզական պիտույքների գնումները) ֆերմաների միջև, յուրաքանչյուրից մարզանքի համար հատկացրած մատղաշների թվի համապատասխան։

Իսկ իրենց մարզակազմի ապահովումը վարսակով, խոտով, ցամքարով ու ձիապաններով՝ յուրաքանչյուր ֆերմայի վրա յեւ ընկնում։

Նմանապես յեթե մի ձիարուծական ֆերմայում կամ մի քանի հարկան ֆերմաներում մարզական հասակի մատղաշների թիվը քիչ ե, ապա մարզակայանը կարելի յեւ կազմակերպել ֆերմաներին մոտ գտնվող պետական ձիարուծարանի ախոռում (ԽՍՀՄ Հողժողկոմատի կոլեգիայի 1932 թ. հոկտեմբերի 16-ի վորոշման հաժաձայն) և նույնակես պայմանադրական սկզբունքներով՝ պետական ձիարուծարանի ախոռի և ֆեր-

մաների միջև Այս գեղքում ել անհրաժեշտ ե, վոր ֆերմաների մարզակադիմ սպասարկող ձիապանները ջոկված լինեն իրենց կոլտնտեսություններից, վորպեսզի նրանց վորակն-այս աշխատանքում բարձանա:

### 1. ՀԵԾԿԱՆ ՄԱՏՂԱՇԽԵՐԻ ՄԱՐԶԱՆՔԸ

#### ա. Մարզաւործ (ՅԱՅՅԱՅԱԿԱ)

Մարզաշարժն սկսում են աշնանը, մատղաշների մեկուկես տարեկան հասակում, վարժեցնելով նրանց սանձի:

Այնուհետև, առանց սանձը հանելու, մտրուկին զբոսանքի յեն հանում պախուցի յերասանակները ձեռքին պահած և նրա հետ քայլում են շրջադռով 15—20 րոպե:

2—3 որից մտրուկին թամբակալ հն հազցնում առանց ուժեղ ձգելու այն և ձեռքում պահած որական 15—20 րոպե ման են ածում:

4—5 այդպիսի զբոսանքից հետո, յերբ մտրուկը թամբակալին վարժվի, նրան սկսում են թամբի վարժեցնել, մկզբում թամբերով նրան առանց ասպանդակի փորի ու ասպանդակի և փորքաշն ուժեղ չքաշած:

Այդպիսի զբոսանքի մի քանի դասից հետո, յերբ մտրուկը թամբին ընտելանա, նրա վրա նստեցնում են թեթև, 48—50 կիլոգրամից վոչ ավելի քաշով մի աղա (վորը ձի նստել վիտենա) և, միասմանակ քայլով շրջադռով նրան ման են ածում սանձը ձեռքում պահած և ամենից լավ և մեծահասակ ձի նստած ձիավորի հետեւ:

Մարզաշարժի նշված ձեզ 1<sup>1</sup>/<sub>2</sub> տարեկան ձիու

համար 10—12 որ ե արվում և չպետք ե շտապել առաջ թե վոչ իզուր շտապողականությամբ ձիուն կարելի յի ջղային և անհանգիստ դարձնել:

Մտրուկին սանձապարանի միջոցով քշել չի հանձնարարվում, վորովնետե բացի բերանի վաղաժամ կոպտացումից, մտրուկը սանձապարանով վաղելիս սովորաբար քայլը խառնում ե, անհամաշափ շարժումների յի վարժվում, հետ և քաշում ու խաղ և անում:

Մտրուկի կերպարժինը մարզաշարժի ժամանակ լինելու յի 4 կորոգրամ վարսակ և 5—6 կիլոգրամ խոտ, գրա վրա ավելացնելով 1 կիլոգրամ գազար կամ թեփ:

Մարզաշարժից հետո սկսվում ե մարզանքի շըրջանը:

#### բ. Մարզանք

1. Մարզանքի ընդհանուր, բոլոր ձիերի համար ձշտորեն սահմանված կանոններ չկան և յուրաքանչյուր ձի իր ընավորության, խառնվածքի և ընդունակությունների համեմատ անհատական մոտեցում և պահանջում:

Մեկուկես տարեկան ձիու աշխատանքը պետք է սկսել փափուկ ճանապարհի վրա (և լավ և ուղիղ գծով)՝ քայլով ման ածելով նրան որական 35—40 րոպե, առնվազն 10—15 որվա ընթացքում, այնուհետև անցնել թեթև վարգի (բաւե), վորը և շարունակել ամբողջ աշունն ու ձմեռը:

Նշված աշխատանքը կատարվում է 6—7 ձիուց բաղկացած խմբակներով, հերթով, ընդվորում ձիերն իրար հետեւից են գնում (իծաղարուկ):

Անհրաժեշտ է, վոր խմբակի առջևից գնացողը հանդիսատ ձի լինի և ձիավարը՝ փորձված տղա:

Վարդով (ժամանակ առժամանակ քայլի անցնելով) աշխատանքը կատարվում է որական մի ժամից վոչ ավելի, հերթափոխելով այդ տերկու քելքը (ալլօր)՝ վարդն ու քայլը այսպես. քայլ—10 րոպե, վարդ—5 ր., քայլ—10 ր., վարդ—15 ր., և քայլ—20 րոպե: Այդպիսով դուրս ե գալիս, վոր մի ժամ աշխատող ձին անցնում է քայլով 3000-ից մինչև 4000 մետր, վարդով՝ 5000-ից մինչև 6000 մետր, իսկ ընդամենը 8000-ից մինչև 10000 մետր:

Նշված աշխատանքը կատարվում է զլիսավորապես հոկտեմբերին-նոյեմբերին:

Տեղումներից և ողի բառեխառնությունից տարվա այդ ժամանակ նկատվող գետնի փոփոխությունների կապակցությամբ, աշխատանքը նույնպես պիտի փոփոխվի, ինչպես, որինակ՝ ցեխի դեպքում, քանի ճանապարհը շատ ծանր է, մի քանի որ պետք է 20—25 րոպե միայն քայլով ման ածել և վարդով աշխատանք չկատարել:

Զմեռն սկսվելուց հետո, յեթե ձյունը շատ և կամ սլաքանակ է լինում, աշխատանքը պետք է կատարել գոմաղբով ծածկված շրջագծի վրա, վորը սարքում են հնարավոր չափով քամուց պաշտպանված տեղում, հարթ հրապարակի վրա, 250—300 մետրից վոչ պակաս և 3—4 մետր լայնությամբ:

Զմեռվա աշխատանքը պետք է կատարել որվա ամենատաք ժամանակի:

2. Փետրվարի վերջից (յեթե յեղանակը թույլ տա) փափուկ, հարթ ճանապարհի վրա կամ լավ նա-

խապատրաստած, վարած, առնվազն 500—700 մետր շրջագծի վրա պետք է սկսել 200—300 մետրանոց թեթև «կենտեր» (կիսարշավ), տարածությունը հետըզնետե ավելացնելով և հասցնելով 300—1000 մետրի, ընդուրում «կենտերը» պետք է սկսել ազատ քայլով, անցնելով 1000—1500 մետրը 8—9 րոպեյում, այնունետե 1000—1500 մետրը ազատ վարդով՝ 5 րոպեյում և ապա, 5 րոպեյով քայլի անցնելուց հետո, սկսել «կենտերը» 800—1000 մետր տարածության վրա, վոչ ավելի արագ, քան կիլոմետրը 2 րոպեյի արագությամբ:

Առաջին «կենտերները» լավ է սկսել ծեր, հանգիստ ձիով, մեկուկես տարեկան ձիերին հերթով բաժանելով 3—4 գլխից բաղկացած խմբակների և յուրաքանչյուր խմբակի հետ «կենտերով» առանձին աշխատել:

3. Գարնանը, յերբ ճանապարհը չորանա (այն պետք է անպայման մշակել և փափուկ պահել), աշխատանքն անցնում է հետզհետե ազատ «կենտերների», մինչև 2 կիլոմետրի հասցնելով նրանց:

Վորպես կանոն, «կենտերով» պետք է աշխատել թե մի և թե հակառակ ուղղությամբ:

4. Հետագայում սկսվում է «լայնարձակ թափով» աշխատանքի շրջանը, այսինքն՝ ձիու նախապատրաստումը մաքսիմալ չափով լարված աշխատանքի:

Այս աշխատանքն ավելի կարճատե է, բայց և ավելի պատասխանատու: Այս շրջանում գործադրվում է միննույն աշխատանքը քայլով, վարդով և «կենտերով» և միննույն հաջորդականությամբ, սակայն «կեն-

տեղն» ավելի ազատ և արվում և կոչվում և «լայնարձակ թափ»:

«Լայնարձակ թափ» նպատակն է ստուգել ձիու կատարած մարզանքը: «Լայնարձակ թափով» աշխատելու համար խմբակները կազմվում են 3 ձիուց վոչ ավելի:

Յեթե «լայնարձակ թափից» հետո ձին ազատ և շնչում, այսինքն՝ յեթե նրա շնչառությունը նորմալ և դժվարացած չե, ապա կարելի յն արագ արշավի (քառատրոփի) անցնել:

Յեթե «լայնարձակ թափը» 600 մետր են անում, ապա պետք և այն սկսել 200 մետր առաջ անցնելով այդ վերջին տարածությունը դադար «կենտերով»:

«Լայնարձակ թափը» պետք և անել վոչ ավելի հաճախ, քան 6—7 որը մեկ, 500-ից մինչեւ 1000 մետր տարածության վրա և զանազան ուղղությամբ (հաջորդաբար):

«Լայնարձակ թափերի» միջն ընկած ընդմիջումի որերը ձին որական 30—40 րոպե թեթև աշխատանք և կատարելու քայլով, վարդով և թեթև «կենտերով», ընդվորում «կենտերը» մեկ ու մյուս կողմ անելիս այնպես են դասավորում, վոր «լայնարձակ թափի» նախորյակին «կենտերը» գեպի առաջ լինի ուղղված:

Աշխատանքի այս շրջանում կերաբաժինը մաքսիմալ չափով պիտի ուժեղացվի և հասնի 6 կիլոդրամ վարսակի և 6 կիլոդրամ խոտի, միկնույն ժամանակ թողնելով կենդանուն որական 1—2 ժամ արածելու:

5. Աշխատանքի վերջին ամիսը, ձիերին իպառդրում (ձիարշավարան) տանելուց առաջ, 500 և 1000 մետր տարածության վրա պետք և յերկու արագ արշավ անել:

Աշխատանքն այս շրջանում կատարվում է բոլոր յերեք քելքով՝ քայլով, վարդով և ազատ «կենտերով», հաջորդաբար մեկ ու մյուս կողմ, իսկ արագ արշավի նախորյակին «լայնարձակ թափ» և արվում 1000 մետրի վրա:

Առաջին արագ արշավը պետք և անել 500 մետրի վրա, անցնելով զույգերով 1000 մետր առաջ, վորտեղից սկսում են գնալ «կենտերով» մոտ 400 մետր, հետո փոփում են «լայնարձակ թափի», աշխատերով, վոր ձին ձախ վոտքից գնա, իսկ 500 մետրից սկսում են արագ արշավը, ընդվորում ձիուն ձեռքով քշել թույլատրվում և տարածության վերջում միայն (75—80 մետրը):

Հետեյալ որը ձիուն կատարյալ հանգիստ են տալիս, թույլատրելով 15—20 րոպե ման ածել միայն:

Հետեյալ արագ արշավը առաջնից հետո պետք և անել 7—8 որից վոչ շուտ, ընդվորում տարածությունը սահմանվում է 1000 մետր:

Առաջին և յերկրորդ արշավերի միջն յեղածընդմիջումի ժամանակ ձիերին 30—40 րոպե նորմալ աշխատանք և արվում քայլով, վարդով և ազատ «կենտերով» (հակառակ ուղղությամբ), առաջվա կարգով, ընդվորում այդ արագ արշավից մի որ առաջ 500 մետր յենթարշավ և արվում:

Այս յերկրորդ 1000 մետր արագ արշավի ժամանակ գուրս են գալիս 1500 մետրից, սկսում են «կենտերով», մոտավորապես 1200 մետրից, փոխում են «լայնարձակ թափի», իսկ 1000 մետրից մինչեւ տարածության վերջն անցնում են հավասար, ամենավերջում միայն (100—150 մետրը) թեթևակի հարկադրելով ձիուն ձեռքով քշելով:

Թե առաջին և թե յերկրորդ արագ արշավի ժամանակ, ըստ հարավորության, արշավի համար պետք է ընտրել միատեսակ ընդունակություններով ոժտված ձիերի դույյեր, վորպեսզի ավելի կայտառ ձին պակաս ընդունակից շատ առաջ չանցնի:

Հետեւալ որը, ինչպես և առաջին 500 մետրանոց արշավից հետո, ձիերին կատարյալ հանգիստ ե տըրպում, ման ածելով նրանց ձեռքում պահած:

6. 1000 մետր արագ արշավից հետո և մինչեւ ձիերին իպաղողում տանելը, նրանք աշխատում են միայն քայլով ու վարդով, որպակն 20—25 րոպե:

Իսկ յեթե ձիերը շուտով չպիտի տարվեն, ապա մի քանի որ առանց «կենտերի», միայն քայլով ու վարդով աշխատելուց հետո, կարելի յե անցնել նաեւ թեթև «կենտերի», իսկ տանելուց մի քանի որ առաջ «կենտերը» դադարեցնում են, աշխատեցնելով քայլով ու վարդով միայն:

## 2. ՎԱՐԳՈՒՆ ՄԱՏՂԱՇՆԵՐԻ ՄԱՐԶԱՆՔԸ

### ա. Մարգարեարծ

1. Մատղաշների մարզաշարժն սկսվում է մեկ ու կես տարեկան հասակում, աշնանից, բայց մարզանքի հատկացրած մտրուկները դեռ գարնան արոտավայր հանելուց առաջ, այսինքն, փետրվարին-մարտին պիտի վարժեցրած լինեն սանձի, թամբակալի և յերասանակով շրջադարձ անելու:

2. Ավելի ձևավորված մտրուկների համար անմիջական մարզաշարժն սկսվելու յե սեպտեմբեր ամսից,

իսկ ուշահաս մատղաշների համար՝ հունվարից-փետրվարից:

Այդ ժամկետից սկսած մտրուկին մարզաշարժ են տալիս յերասաններով:

Դեռ մարզաշարժից առաջ մտրուկը սանձի, յերախանի (ցալա), լծաթամբիկի և ագեփոկի արդեն վարժեցրած պիտի լինի: Մարզաշարժի հանելիս մի կամ յերկու մարդ մտրուկին բերում են ազատ յերասանակներով, իսկ ձիավարը յերասանները պահում ե հետեւ, հետգիտե վարժեցնելով շրջադարձերի, կանգնելու և այլն: Յերախանի վարժեցնելիս առանձնապես ուշադրություն պետք է դարձնել յերախանի չափին և նրա կանոնավոր դիրքին ձիու բերնում, ընդուրում յերախանը վորեւ հարմարանք չպիտի ունենա:

Մտրուկի հետ այս աշխատանքը կատարելիս ձիավարն առավելագույն չափով տոկունություն ու համբերություն պիտի ցուցաբերի:

3. Յերբ առանձին մտրուկներ մարզաշարժով բավականաչափ արդեն նախապատրաստված են լինում, այսինքն՝ վարժված են յերասանների, շրջադարձնելու և կանգնելու առանց ձիավանների ոգնության, այլ միայն ձիավարի ղեկավարությամբ, մտրուկներին կարելի յե ճոճակառքի (կաշալու) լծել՝ առանց մեջը նստելու, և յերբ նրանք վարժվեն դրան, մարզաշարժը կարելի յե կատարել արդեն ճոճակառքով (3—4 անգումը բավական ե):

Յերբ մտրուկը ճոճակառքին լծվելու և ազատ մասն զալու կատարելապես վարժվի, ձիավարը կարող է նստել ճոճակառքը, իսուսափելով ընթացքի ժամանակ նստելուց:

Հետագայում, ձմեռը, յիրք բավականաչափ լայն ու թեթև ճանապարհներ լինեն, մտրուկներին կարելի յե թեթև սահնակի լծել, ընդվորում այդ շրջանի աշխատանքի բնույթը բացառապես նպատակ ունի մըտրուկին կառքի լծվելու վարժեցնել և վոչ թե նրա մկանաւելու ու արագավազությունը զարգացնել. հետևապես այդպիսի վազքը յերկարատև չպիտի լինի, այլ միայն 15—20 րոպե, վորպեսզի մատղաշները չհոգնեն:

Մարզաշարժի ժամանակ վորքե շտապողականություն ընդհանրապես չպիտք ե թույլատրել: Մարզաշարժի նպատակն ե մտրուկի մեջ հանդարտությունն մշակել (լծելու ժամանակ), քայլի և թեթև վարդի ժամանակ համաչափ և կանոնավոր շարժումների վարժեցնել և առանց վորքե լարվածության շրջադարձ անելու ու կանգնելը հասկացնել:

Զմեռվա յերկրորդ կեսից (հունվար-փետրվար) յեթե համապատասխան, բավականին հարթած ճանապարհ լինի, զարգացած մտրուկների համար կարելի յե օկես թափովա աշխատանքի անցնել 2—3 կիլոմետր տարածության վրա, առառավելուն կիլոմետրը 3—4 րոպեիցի արագությամբ և այդպիսի աշխատանքը թույլատրելով վոչ ափելի հաճախ, քան 2—3 որը մեկ:

Այդ շրջանի աշխատանքի նպատակն յերկար, կանոնավոր ու պարզորոշ շարժումներ մշակել և մկաններին վորոշ աշխատանք տալ:

Արագ վազք չի թույլատրվում: Առավել ևս չի թույլատրվում այդ շրջանում մտրուկներին հարկադրել կարճատև շարժումներ անել ընկրկել և այլն:

Մտրուկի կերաբաժինը հիշված ժամանակամիջու

ցում հետզհետե մոտենալու յե 4 կիլոդրամ վարսակի, 5—6 կիլոդրամ խոտի, անպայմանորեն պահպանելով լրացուցիչ կերերը (գաղար, թեփ):

## Բ. Մարզական պահպան

1. Գարնան և ամառվա աշխատանքն ավելի լուրջ բնույթ և ստանում: Պարտադիր չե, վոր մտրուկի սկզբնական մարզանքը ձոճակառքի լծած և ամերիկական լծասարքով լինի և անգամ ոգտակար և թեթև սայլակ գործադրել ընդվորում լծասարքն անպայման մտրուկի չափերին պիտի համապատասխանի և բավականաչափ թեթև ու կանոնավոր հարդարած լինի: Այս սկզբնական աշխատանքում թեթև սայլակի և անուրի գործադրությունը նպաստում ե ուսի մկանների ամրացմանը, մտրուկի առջեկի մասի ընդհանուր զարգացմանը և շարժումների կանոնավորությանը, մանավանդ առջեկի վոտքերի համար:

Մատղաշների աշխատանքի այս շրջանում առանձին ուշադրություն պետք ե գարճնել կանոնավոր ընթացք և օփափուկ բերանա մշակելու վրա, ընդվորում ամառվա կեսին (հունիսին) աշխատանքը հասցնում են թեթև ըլայնարձակ թափի» 2000—3000 մետրի վրա (կիլոմետրը մոտավորապես 3—4 րոպեյում), վորն արվում ե չպայտած մատղաշներով, ուղիղ և հարթ հանապարհի վրա, խուսափելով շրջադարձերով հարուստ շրջագծի վրա աշխատելուց:

Զայտած մատղաշների աշխատանքի համար հանապարհը փափուկ պիտի լինի և սմբակների վիճակն այդպիսի աշխատանքի համապատասխանի:

թշել թույլատրվում և միայն ձայնով և վոչ մի գելքում յերասաններով, ապա թե վոչ դրանով կենդանու բերանը կարելի յե փչացնել և նրա ներվաշին սիստեմը խանգարել:

Այդպիսի աշխատանք ամեն որ չպիտի տրվի, այլ 1—2 որ ընդմիջումով, և հանգստի որերին մտըուկին պետք ե արածելու թողնել:

2. Հուսիսի յերկրորդ կեսին և հուլիսի սկզբին լավ ընթացք ունեցող մտըուկներին արագության պահանջներին են վարժեցնում կարձ՝  $\frac{1}{8}—\frac{1}{4}$ , կիլոմետր տարածությունների վրա, ընդվորում այդ «արագ վերջույքները» աշխատանքի վերջում պիտի լինեն, փորոնցից հետո ձիավարը քայլով և ապա «տրոտով» պիտի վերադառնա ախոռ:

Այս «արագ վերջույքները» միևնույն տեղում և միևնույն ճանապարհների վրա չպիտի արվի, այլ հերթափոխելով, տարբեր տեղերում, վորպեսզի ճանապարհի արագ ու դանդաղ «տեղերին» մտըուկը չընտելանա:

Առանձնապես կարեոր ե մտըուկի շնչառության արագությանը հետեւ իսկույն պակսեցնելով արագ վերջույքի տարածությունը կամ նրա արագությունը, մինչև վոր կենդանու շնչառությունը քելքի համապատասխան նորմալ լինի:

Կերն աշխատանքի այս շրջանում պիտի լինի 5—6 կգ վարսակ և 6 կգ խոտ, թողնելով միևնույն ժամանակ արածելու:

3. Խպպոդրոմի վաղահաս յերութների համար հատկացրած մտըուկները բացի սովորական ըլայնարձակ թափով» աշխատանքից, մի քանի անգամ (մո-

տավորապես վեցորյակում մի անգամ) ճոճակառքի լծած 1600—3000 մետր «թափով» աշխատանք են ունենում, կիլոմետրը  $3\frac{1}{2}—2\frac{1}{2}$  րոպեյի արագությամբ, ընդվորում աշխատանքի վերջը, որինակ, վերջին  $\frac{1}{4}$  կիլոմետրը կարելի յե վերջացնել արագ, սակայն առանց մտըուկին հարկադրելու:

Այդպիսի արագ «վերջույքների» տարածությունը հետզինետե ավելացնում ու հասցնում են  $\frac{1}{4}—\frac{1}{2}—\frac{3}{4}$  կիլոմետրի և այլն, ընդվորում ձիավարը պիտի հետեւ, վոր մտըուկը միշտ հաճույքով ընթանա և տարածությունը վերջացնի թարմ վիճակում և վոչ թե կանգնելով, այսինքն՝ հոգնելով:

Աշխատանքի այս շրջանում մատղաշներին թեթև պայտերով են պայտում:

Յերբ մտըուկն արդեն 1600 մետրն արագ անցնելու պատրաստ լինի, ձիավարն այդ տարածությունն այնպես պիտի անցնի, վոր մտըուկը տարածության ակրեց մինչև վերջը արագությունը հետզինետե զարգացնի և առավելացնույն չափով ցուցաբերի այն վերջին  $\frac{1}{4}$  կիլոմետրի վրա:

4. Յերիտասարդ ձիերին «տրոտով» չպետք է աշխատեցնել այլ փոխարինել այն «լայնարձակ թափով», քանի վոր «տրոտը» մտըուկների համար պիտանի չե՝ նա բթացնում ե կենդանու յեռանդը, մըտըումների ընդունակությունը կորցնում ե:

Այս գեպքում, յերբ աշխատանքի շրջանում ձիավարը նկատի, վոր մտըուկն սկսում ե հոգնել, կերը վատ ե ուտում, աշխատանքի ակամա յե անցնում և հետաքրքրություն չի ցուցաբերում, — նա մտըուկին



աշխատանքից պիտի ազատի 7—10 որով, և թողնե  
արածելու, մինչև վոր կենդանին իր յեռանդն ու տրա-  
մադրությունը վերականգնի:

Ոգոստոսին, արդեն յերկու տարեկան հասակում,  
ձին գնում ե իպաղողոմ, վորտեղ և յենթարկվում ե  
սիստեմատիկ ստուգման, յելույթներ ունենալով իպա-  
դրումի ստուգումների կանոնների համաձայն:

Մարզանքի պրակտիկ գործադրության մեջ դըժ-  
վարությունների հանդիպելիս ձիարուծական կոլարն-  
տեսային ֆերմանները մարգ., յերկը, հողվարչությունն-  
երի և հանրապետությունների հողժողկոմատների  
ձիաբուծական վարչություններին պիտի դիմեն:

ԽՍՀՄ ՀԺԿ Զիարուծական

գլխ. Վարչույան պետ,

Խարեգային Միուրյան մարօն՝

ԲՈՒԴՅՈՒՆԻ

Քարդանեց՝ Գ. Հարությունյան  
Պատ. Խմբագիր՝ Ա. Ալահվերդյան  
Տէխ-խմբ. և սրբագրիչ՝ Խ. Արվազյան  
Գրավիակ լիազոր № 1182

Հրատ. 431, տիրաժ 1500, պատվեր 338

Հանձնված ե արտադրության 1937 թ. մայիսի 14-ին  
Ստորագրված ե ապագրության 1937 թ. մայիսի 25-ին

ՀՀ Ազգային գրադարան



NL0927880

Դյուլհրատի տպարան, Երևան, Նալբանդյան, № 11

272

ԳՐԱՅԻ ԶՈ ԿԱՌ.

7 ИЮН. 1937

1  
3444



## ПРАВИЛА

по подготовке к испытаниям (тренингу)  
молодняка колхозных коневодческих  
товариществ и ферм племенного направления

---

Сельхозгиз,

Ереван,

1937 г.